ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

4 հունիսի 2021 թ. N 584- Ա

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ կետով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության ոլորտում նորարարության և ձեռներեցության խրախուսման դրամաշնորհային ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) ծրագրի կատարման հսկողությունը վերապահվում է Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն).

2) նախարարությունը տնտեսական տարին ավարտելուց հետո՝ մեկամսյա ժամկետում Արցախի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ***Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2021 թվականի _____-ի
N ___ Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության ոլորտում նորարարության և ձեռներեցության խրախուսման նպատակով դրամաշնորհային ծրագրով կանոնակարգվում են Արցախի Հանրապետությունում էկոնոմիկայի և գյուղատնտեսության ոլորտների զարգացման, կայուն մրցունակության ապահովման, արտահանման ներուժ ունեցող արտադրության բարձրացման նպատակով Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից դրամաշնորհներ հատկացնելու հետ կապված հարաբերությունները:

2. Ծրագրով հնարավորություն է ընձեռվում Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության ոլորտներում գտնելու կայուն և կենսունակ լուծումներ՝ սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործընթացում և այն կյանքի կոչել դրամաշնորհների հատկացման միջոցով:

3. Սույն ծրագրում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) ***հայտատու՝*** սույն ծրագրի շրջանակներում նախարարություն դիմած Արցախի Հանրապետության քաղաքացի կամ իրավաբանական անձ, բացառությամբ զորահավաքային զորակոչով չներկայացած Արցախի Հանրապետության պահեստազորային, կամ նրա ամուսին կամ համատեղությամբ բնակվող ծնող, կամ համատեղությամբ բնակվող զավակ.

2) ***դրամաշնորհ՝*** սույն ծրագրի շրջանակներում մրցույթում հաղթող ճանաչված հայտատուներին տրամադրվող անհատույց ֆինանսական միջոցներ:

2. ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

4. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության համաչափ զարգացման հիմնական նպատակն է իրականացվող բարեփոխումների խորացման, տնտեսավարման ձևերի կատարելագործման արդյունքում ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ կայուն գործունեության ապահովման համար: Էկոնոմիկայի և գյուղատնտեսության ոլորտում նորարարության և ձեռներեցության խրախուսման նպատակով դրամաշնորհային ծրագրի իրականացման արդյունքում հնարավորություն կստեղծվի լուծել հետևյալ հիմնական խնդիրները՝

1) գյուղատնտեսական արտադրանքի ստեղծում՝ հիմնվելով համայնքում առկա բնական ռեսուրսների և դրանց արդյունավետ օգտագործման վրա.

2) գյուղատնտեսական արտադրության կազմակերպման միջոցով նոր աշխատատեղերի ստեղծում և ներդրումային գրավիչ միջավայրի ձևավորում.

3) միջհամայնքային տնտեսական ներգրավման (ինտեգրման) գործընթացի խթանում.

4) բնակչության կենսամակարդակի աստիճանական բարձրացում, սոցիալական արդարության արմատավորում.

5) նախաձեռնողականության խթանում.

5. Ծրագրի նպատակներն են ՝

1) ներհամայնքային սոցիալ-տնտեսական խնդիրների կայուն և կենսունակ լուծումներ՝ կենտրոնացնելով համայնքի ներքին և արտաքին ռեսուրսները.

2) նորարարական մոտեցումներով շուկայական գործունեության կատարելագործումը.

3) Արցախի Հանրապետությունում մշակող արդյունաբերության ճյուղերի զարգացման համար նախադրյալների ստեղծումը.

4) գյուղական համայնքներում առկա բնական ռեսուրսների օգտագործմամբ Արցախի Հանրապետությունում գյուղական տուրիզմի զարգացման խթանումը:

3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

6. Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) գյուղատնտեսության զարգացման խթանում ինովացիոն տեխնոլոգիաների միջոցով՝ նորագույն տեխնոլոգիաներով գյուղատնտեսության որևէ բնագավառի զարգացմանն ուղղված միջոցառում՝ օգտագործելով համայնքում առկա բնական ռեսուրսները (նորարարական մոտեցումներով և լուծումներով գյուղատնտեսական արտադրանքի ստեղծում, ձկնաբուծարանների կառուցում, ծառայությունների մատուցում, մասնագիտական խորհրդատվություն և այլն).

2) մշակող արդյունաբերության զարգացում՝ արտահանման ներուժ ունեցող նորարարական մոտեցումներով (սննդամթերքի, խմիչքների, ծխախոտային արտադրատեսակների, հագուստի, կաշվի, փայտանյութի, կահույքի, ոսկերչական

արտադրատեսակների, օծանելիքի, կոսմետիկական միջոցների, դեղագործական արտադրանքի, հանքային կամ մետաղե արտադրատեսակների, թղթի և թղթե արտադրատեսակների, էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների և այլնի) արտադրություն՝ միջազգային ստանդարտներին համապատասխան.

3) գյուղական տուրիզմի զարգացում՝ գյուղական համայնքներում տուրիզմի զարգացման խթանում (զբոսաշրջիկների համար կոլորիտային վայրերի, գինու համտեսման սրահների, հյուրատների և սննդի կետերի բացում, ձկնորսական տուրիզմի զարգացում, հուշանվերների արտադրության խթանում, արշավների կազմակերպում, ձիարշավային տնտեսությունների շահագործման խթանում, քեմփինգի համար նախատեսված հնարավորությունների ստեղծում, գյուղական միջավայրի պատմամշակութային կամ այլ առանձնահատկությունների ներկայացում)՝ օգտագործելով համայնքում առկա ռեկրեացիոն ռեսուրսները:

4. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

7. Նախարարությունը կազմակերպում, համակարգում և վերահսկողություն է իրականացնում ծրագրի իրականացման գործընթացի նկատմամբ:

8. Սույն ծրագրով նախատեսված մրցույթը կազմակերպում է Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ կազմակերպիչ):

9. Սույն ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով այդ նպատակով նախատեսված միջոցներով:

10. Պարտադիր պայման է հանդիսանում ծրագրի իրականացումը Արցախի Հանրապետության տարածքում, ինչպես նաև ներկայացված ծրագրի ընդհանուր արժեքի՝ սույն ծրագրի 6-րդ կետով սահմանված 1-ին և 3-րդ ենթակետերով 20 տոկոսի, իսկ 2-րդ ենթակետով 25 տոկոսի չափով հայտատուի սեփական միջոցներով ներդրումը: Հայտատուի կողմից սեփական միջոցներով ներդրումը իրականացվում է դրամական տեսքով: Շահառուն մինչև ծրագրի իրականացման մեկնարկը դրամական միջոցները փոխանցում է իր հաշվարկային հաշվին: Նշված գումարը հանդիսանում է որպես բիզնես նախագծի իրականացնան երաշխիք և կարող է օգտագործվել ծրագրի միայն վերջին փուլում:

11. Մրցույթի անցկացման մասին հայտարարությունը հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցներով, ինչպես նաև տեղադրվում է կազմակերպչի պաշտոնական կայքէջում:

12. Մրցույթի հայտարարությունը պետք է պարունակի՝

1) հայտերի ընդունման մեկնարկի և ավարտի ամսաթիվը,

2) մրցույթի անցկացման պայմանները,

3) հայտերի գնահատման չափանիշները,

4) հաղթողներին որոշելու կարգը,

5) կազմակերպչի գտնվելու վայրի հասցեն և կոնտակտային տվյալները:

13. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարի հրամանով ստեղծվում է դրամաշնորհի հատկացման նպատակով անցկացվելիք մրցույթի՝ առնվազն 5 անդամից բաղկացած մրցութային հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

14. Սույն ծրագրի 6-րդ կետով սահմանված միջոցառումներին մասնակցելու նպատակով հայտատուները նախարարություն են ներկայացնում հայտ՝ համաձայն ձևի:

15. Հայտին կից ներկայացվում են՝

1) տեղեկանք հարկային մարմնից վերջին հաշվետու ամսաթվի դրությամբ հարկերի և տուրքերի գծով պարտքի բացակայության մասին (առկայության դեպքում),

2) նախորդ տարվա տնտեսական գործունեության համար հաշվապահական (Ֆինանսական) հաշվետվությունները (առկայության դեպքում),

3) բիզնես պլան կամ բիզնես նախագծի տեխնիկատնտեսական հիմնավորում՝ թղթային և թվային ձևաչափերով,

4) լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների դեպքում լիցենզիաների պատճենները,

5) հողամասի կամ գործունեության տարածքի սեփականության, կամ վարձակալության, կամ գույքի նկատմամբ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականների պատճենները,

6) ենթակառուցվածքի առկայության դեպքում՝ սեփականության կամ վարձակալության վկայականի պատճենը:

16. Յուրաքանչյուր հայտատու կարող է դիմել տարբեր միջոցառումների շրջանակներում, բայց հաղթող կարող է ճանաչվել միայն մեկ ծրագրի համար:

17. Բավարարված և մրցույթի մասնակցությանը թույլատրված հայտերը վերլուծվում և գնահատվում են հանձնաժողովի կողմից՝ սույն ծրագրի 20-րդ, 22-րդ և 24-րդ կետերով սահմանված գնահատման չափանիշներին համապատասխան:

18. Հանձնաժողովը որոշում է ընդունում մրցույթի հաղթողների վերաբերյալ ձայների մեծամասնությամբ:

19. Կազմակերպիչն իր պաշտոնական կայքում տեղադրում է մրցույթում հաղթողների վերաբերյալ տեղեկատվությունը՝ հանձնաժողովի նիստի արձանագրությունը ստորագրելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

20. Սույն ծրագրի 6-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված միջոցառման համար հայտերի գնահատման (առավելագույն) չափանիշներն են՝

1) տնտեսական արդյունավետություն՝ 9 բալ (շահութաբերությունը),

2) իրացման ծավալը՝ 9 բալ,

3) բյուջեների բոլոր մակարդակներին հարկային մուտքերի ծավալը՝ 4 բալ,

4) ներդրումային ժամկետը՝ 9 բալ,

5) նոր ստեղծվող աշխատատեղերի քանակը՝ 9 բալ,

6) մարքեթինգային քաղաքականությունը և արտադրանքի արտաքին տեսքը՝ 9 բալ,

7) դրամաշնորհի գումարի հարաբերակցությունը բիզնես նախագծի ընդհանուր արժեքին՝ (ներառյալ գույքային ներդրումը) 9 բալ,

8) բիզնես նախագծում նորարարական բաղադրիչի առկայությունը՝ 9 բալ,

9) բիզնես նախագծի իրականացման ռիսկի մակարդակը՝ 9 բալ,

10) նախագծի բնապահպանական անվտանգությունը՝ 9 բալ,

11) տարածքային տեղակայումը, ապակենտրոնացումը՝ 6 բալ

12) ծրագրի իրատեսական լինելը՝ 9 բալ:

21. Սույն ծրագրի 6-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված միջոցառման համար նախատեսվում է ընդհանուրը՝ 35 000 000 (երեսունհինգ միլիոն) ՀՀ դրամ: Սույն ծրագրի շրջանակներում հաղթող կարող են ճանաչվել 3 մասնակից:

22. Սույն ծրագրի 6-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված միջոցառման համար հայտերի գնահատման (առավելագույն) չափանիշներն են՝

1) տնտեսական արդյունավետություն՝ 9 բալ (շահութաբերությունը),

2) իրացման ծավալը՝ 5 բալ,

3) բյուջեների բոլոր մակարդակներին հարկային մուտքերի ծավալը՝ 6 բալ,

4) ներդրումային ժամկետը՝ 5 բալ,

5) նոր ստեղծվող աշխատատեղերի քանակը՝ 10 բալ,

6) մարքեթինգային քաղաքականությունը և արտադրանքի արտաքին տեսքը՝ 7 բալ,

7) դրամաշնորհի գումարի հարաբերակցությունը բիզնես նախագծի ընդհանուր արժեքին՝(ներառյալ գույքային ներդրումը) 10 բալ,

8) բիզնես նախագծում նորարարական բաղադրիչի առկայությունը՝ 8 բալ,

9) բիզնես նախագծի իրականացման ռիսկի մակարդակը՝ 8 բալ,

10) նախագծի բնապահպանական անվտանգությունը՝ 7 բալ,

11) տեղական գյուղմթերքի և այլ հումքի օգտագործումը՝ 10 բալ,

12) տարածքային տեղակայումը, ապակենտրոնացումը՝ 5 բալ

13) ծրագրի իրատեսական լինելը՝ 10 բալ:

23. Սույն ծրագրի 6-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանմած միջոցառման համար նախատեսվում է ընդհանուրը՝ 45 000 000 (քառասունհինգ միլիոն) ՀՀ դրամ: Սույն ծրագրի շրջանակներում հաղթող կարող են ճանաչվել 3 մասնակից:

24. Սույն ծրագրի 6-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված միջոցառման համար հայտերի գնահատման (առավելագույն) չափանիշներն են՝

1) տնտեսական արդյունավետություն՝ 10 բալ (շահութաբերությունը),

2) բյուջեների բոլոր մակարդակներին հարկային մուտքերի ծավալը՝ 5 բալ,

3) ներդրումային ժամկետը՝ 10 բալ,

4) նոր ստեղծվող աշխատատեղերի քանակը՝ 5 բալ,

5) մարքեթինգային քաղաքականությունը և արտադրանքի արտաքին տեսքը՝ 5 բալ,

6) դրամաշնորհի գումարի հարաբերակցությունը բիզնես նախագծի ընդհանուր արժեքին՝ (ներառյալ գույքային ներդրումը) 10 բալ,

7) բիզնես նախագծում նորարարական բաղադրիչի առկայությունը՝ 5 բալ,

8) բիզնես նախագծի իրականացման ռիսկի մակարդակը՝ 10 բալ,

9) նախագծի բնապահպանական անվտանգությունը՝ 10 բալ,

10) տեղական գյուղմթերքի և այլ հումքի օգտագործումը՝ 10 բալ,

11) տարածքային տեղակայումը, ապակենտրոնացումը՝ 10 բալ

12) ծրագրի իրատեսական լինելը՝ 10 բալ:

25. Սույն ծրագրի 6-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված միջոցառման համար նախատեսվում է ընդհանուրը՝ 20 000 000 (քսան միլիոն) ՀՀ դրամ: Սույն ծրագրի շրջանակներում հաղթող կարող են ճանաչվել 4-5 մասնակից:

26. Մրցույթի անցումային (նվազագույն) շեմը՝ գումարային 70 բալն է:

27. Մրցույթի արդյունքների հրապարակման պահից յոթ աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպիչը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների հետ կնքում է համապատասխան դրամաշնորհի պայմանագրեր՝ սահմանելով նախագծի իրականացման ընթացքում միջանկյալ և ամփոփիչ հաշվետվությունների ներկայացման ժամանակացույց:

28. Դրամաշնորհի պայմանագրով սահմանված պայմանների խախտման դեպքում մրցույթում հաղթող ճանաչված անձը պարտավոր է դրամաշնորհի պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում դրամաշնորհի գումարը վերադարձնել Արցախի Հանրապետության պետական բյուջե:

5. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

29. Սույն ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

1) Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության զարգացմամբ հետաքրքրված անհատների կարողությունների միավորումը,

2) նորարական մոտեցումներով և լուծումներով երիտասարդական նախաձեռնողականության զարգացումը, մոտիվացիան,

3) համայնքերում առկա բնական ռեսուրսների լիարժեք օգտագործումը,

4) նոր աշխատատեղերի ստեղծումը,

5) փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության զարգացումը:

Ձև

Արցախի Հանրապետության

Էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարություն

ՀԱՅՏ

Դիմող _____

(ֆիզիկական կամ իրավաբանական անձի)

_____

Բնակության (գտնվելու կամ հաշվառման) վայրը

_____

Հեռախոսահամարը_____

Էլեկտրոնային հասցե_____

Անձնագրի և հանրային ծառայությունների համարանիշի համարը (պետական գրանցման կամ հաշվառման համարը)_____

Գործունեության իրականացման վայրը _____

Դիմում եմ Ձեզ «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության ոլորտում նորարարության և ձեռներեցության խրախուսման նպատակով դրամաշնորհային» ծրագրին մասնակցելու նպատակով:

Ծրագրի իրականացմանն ուղղված միջոցառման անվանումը_____

Միջոցառման առանձնահատկությունը_____

Դրամաշնորհից ակնկալվող գումարի չափը_____

Սեփական միջոցներով ներդրումների չափը_____

(սեփական միջոցներով ներդրումը պետք է լինի ներկայացվող ծրագրի ընդհանուր արժեքի 20-25 տոկոսի չափով)

Համապատասխան բնագավառում փորձի առկայությունը_____

Ակնկալվող արդյունները 3-5 տարվա կտրվածքով _____

Ծրագրի ազդեցությունը Ձեր գործունեության և համայնքում սոցիալ-տնտեսական վիճակի վրա_____

Ծրագրի ազդեցությունը գյուղական համայնքի զարգացման վրա_____

Արտադրանքի հետագա իրացման մարկետինգային ռազմավարությունը_____

Ստացվող արտադրանքի իրացումը ներքին շուկայում_____

Ստացվող արտադրանքի իրացումը արտաքին շուկայում_____

Ծրագրի ռիսկերը_____

Կցել՝

1. լրացված ֆայլը,
2. Այլ նկարներ, բիզնես պլան կամ այլ ֆայլերը, որոնք կարող են օգնել էլ ավելի լավ հասկանալ ծրագիրը:

Դիմում-հայտին կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

_____

_____

_____

_____

Ներկայացված փաստաթղթերը ենթակա չեն վերադարձման:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

_____

(ստորագրությունը, անունը, ազգանունը (իրավաբանական անձի անվանումը))

«___» _____ 2021թ.

Կ.Տ.

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ***Ա. ԼԱԶԱՐՅԱՆ***